

33-րդ թաղամասի կառուցման ներդրումային ծրագիր¹




Ծրագրի նկարագիրը

Կենտրոն վարչական շրջանում գտնվող «Ֆիրդուսի» տոնավաճառի տարածքում նախատեսվող նոր թաղամասի կառուցման նպատակն է տարածքի բարեկարգումը, կանաչապատումը, առավել արդյունավետ պլանավորումը և օգտագործումը հաշվի առնելով քաղաքացիների մերօրյա պահանջները և կարիքները: Նախատեսվող ծրագրով թաղամասը կունենա բազմաֆունկցիոնալ նշանակություն: Այն կունենա ն՝ բնակելի, և՛ կոմերցիոն հատվածներ:

Տարածքում նախատեսվում է նոր փողոցների, հասարակական և սպասարկման օբյեկտների, բիզնես կենտրոնների, հյուրանոցների և բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցում: Այստեղ նախատեսվում է նաև կառուցել շուրջ 40 մետր բարձրություն և 85 մետր տրամագիծ ունեցող շրջանաձև հրապարակ, որի տակ կկառուցվի բազմահարկ ստորգետնյա ավտոկայանտեղի:

Նոր թաղամասի կառուցման ընթացքում տարածքում առկա 19-րդ դարի հուշարձանները կմնան կանգուն:




Ըստ Ա.Թամանյանի գլխավոր հատակագծի այս տարածքն անվանվել էր Հարավային պողոտա: Ներկայիս «Ֆիրդուսի» տոնավաճառի տարածքը, որը մի

¹ Աղբյուրը՝ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Invest in Armenia էլեկտրոնային հարթակ (<http://investmentprojects.am/en/41>):

կողմից գտնվում է Հանրապետության հրապարակի, իսկ մյուս կողմից՝ Տիգրան Մեծ փողոցի հարևանությամբ, հետագայում նոր ճանապարհով կմիացվի Վերնիսաժի հետ, որը նաև կունենա մշակութային նշանակություն:

Նախագծվող թաղամասը՝ շենքերը, ճանապարհները, անցումները, կհարմարեցվեն հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար:



**Տեխնիկական
ցուցանիշներ**

Նախագիծն ընդգրկում է ընդհանուր առմամբ 5.5 հա մակերես:
Կառուցապատման ընդհանուր մակերեսը կկազմի շուրջ 200.000 քմ:
Ծրագրի շրջանակում նախատեսվող շենքերի հարկայնությունը կլինի 7-9 և 12-13 հարկ, իսկ շենքերի հարկայնության թույլատրելի բարձրությունը՝ առավելագույնը 48մ, միջին բարձրությունը՝ 27մ:
Ամբողջ տարածքը բաժանված է 18 մասերի (ԼՈՏ-երի)՝ ըստ իրենց նպատակային նշանակության, որից 4-ն արդեն վաճառված են:

LOT 1	LOT 2	LOT 3	LOT 4	LOT 5	LOT 6	LOT 7	LOT 8	LOT 9	LOT 10	LOT 11	LOT 12	LOT 13	LOT 14	LOT 15	LOT 16	LOT 17	LOT 18
SITE AREA: 404 sqm	SITE AREA: 1400 sqm	SITE AREA: 205 sqm	SITE AREA: 645 sqm	SITE AREA: 800 sqm	SITE AREA: 517 sqm	SITE AREA: 1500 sqm	SITE AREA: 1580 sqm	SITE AREA: 1700 sqm	SITE AREA: 1800 sqm	SITE AREA: 3700 sqm	SITE AREA: 2700 sqm	SITE AREA: 1000 sqm	SITE AREA: 2800 sqm	SITE AREA: 3070 sqm	SITE AREA: 250 sqm	SITE AREA: 1000 sqm	SITE AREA: 4800 sqm
GROSS AREA: 404 sqm	GROSS AREA: 1400 sqm	GROSS AREA: 205 sqm	GROSS AREA: 645 sqm	GROSS AREA: 800 sqm	GROSS AREA: 517 sqm	GROSS AREA: 1500 sqm	GROSS AREA: 1580 sqm	GROSS AREA: 1700 sqm	GROSS AREA: 1800 sqm	GROSS AREA: 3700 sqm	GROSS AREA: 2700 sqm	GROSS AREA: 1000 sqm	GROSS AREA: 2800 sqm	GROSS AREA: 3070 sqm	GROSS AREA: 250 sqm	GROSS AREA: 1000 sqm	GROSS AREA: 4800 sqm
CONSTRUCTION TOTAL AREA: 2400 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 7000 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 1430 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 4500 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 4500 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 1020 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 3500 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 3500 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 3500 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 3500 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 9200 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 2000 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 3000 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 9200 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 4100 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 1000 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 2000 sqm	CONSTRUCTION TOTAL AREA: 11000 sqm
UNDERGROUND: 600 sqm	UNDERGROUND: 3000 sqm	UNDERGROUND: 430 sqm	UNDERGROUND: 1300 sqm	UNDERGROUND: 1300 sqm	UNDERGROUND: 500 sqm	UNDERGROUND: 1200 sqm	UNDERGROUND: 1200 sqm	UNDERGROUND: 1200 sqm	UNDERGROUND: 1200 sqm	UNDERGROUND: 2500 sqm	UNDERGROUND: 500 sqm	UNDERGROUND: 1000 sqm	UNDERGROUND: 2500 sqm	UNDERGROUND: 1000 sqm	UNDERGROUND: 500 sqm	UNDERGROUND: 1000 sqm	UNDERGROUND: 500 sqm
CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 5.3%	CONSTRUCTION DENSITY: 97%	CONSTRUCTION DENSITY: 69%	CONSTRUCTION DENSITY: 56%	CONSTRUCTION DENSITY: 66%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 4.7%	CONSTRUCTION DENSITY: 72%	CONSTRUCTION DENSITY: 40%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 3.3%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 100%	CONSTRUCTION DENSITY: 27%

**Ծրագրի
ժամկետներ**

Ծրագրի իրականացման տևողությունը՝ 3-4 տարվա ընթացքում:

Ծրագրի արժեքը

Ծրագրի ներդրումային արժեքը կազմում է շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար:

**Ներդրումների
ձևը և հիմնական
պայմանները**

Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության հովանու ներքո և ներդրողները նախագծի իրականացման ընթացքում կօգտվեն արտոնություններից:

***Ներկա
հրավիճակ***

Ծրագրի իրագործման գործընթացը մեկնարկել է: